պը չէր արտօնում եւ չի արտօնում դեռ, որ հայերն իրենց հոգեւոր կարիքները հոգան կաթոլիկ եկեղեցիներում: Հայերի մուտքը կաթոլիկ հոգեւոր միաբանութիւնների մէջ թոյլատրւում է լոկ որպէս բացառութիւն, միայն պապի անձնական կարգադրութեամբ եւ միշտ դժկամակութեամբ:

Եւ պապերի այս քաղաքականութեան շնորհիւ միայն մինչեւ այժմս էլ հայ են մնացել հռոմէական եկեղեցուն յարած հայերը:

Մենք ունինք փաստեր, որոնք ցոյց են տալիս, որ միութիւնն ընդունելուց յետոյ, յամենայն դէպս ոչ ուշ ԺԹ դարի սկզբից, հայերը, մանաւանդ կալուածատէր-ազնուականներն ու հարուստ վաճառականները, իրենց ծանր էին համարում հայ-կաթոլիկական ծէսը, որը, առանց իրենց որեւէ առաւելութիւն տալու, դուրս էր հանում լեհ ազգաբնակութեան ընդհանուր զանգուածից: Հայերի մէջ առաջ եկած այս շարժումը, ըստ երեւոյթին, որոշ համակրանք գտաւ եւ տեղական (լեհ) լատին հոգեւորականութեան մէջ, այնպէս որ 1848 թ., երբ թափուր դարձաւ Լվովի լատին եպիսկոպոսական աթոռը, թէ՛ լատին եւ թէ՛ հայ հոգեւորականութեան մէջ միտք ծագեց, այն ժամանակուայ հայ արքեպիսկոպոս զառամեալ Ստեփանովիչին նստեցնել Լվովի լատին եկեղեցու եպիսկոպոսական աթոռը, որով հայ հօտն էլ կը միացուէր լատին եկեղեցուն:

Այս միտքը աշխատեցին իրականացնել աւրստրիական կենտրոնական իշխանութեան միջոցով, սակայն, պապը այս անգամ էլ միջամտեց եւ իր իշխանութեամբ, առանց աւրստրիական կառավարութեան հաւանութիւնն առնելու, Շիմանովիչին նշանակեց աթոռակից cum nure seccededi եւ դրանով պահեց հայ-կաթոլիկ առանձին եկեղեցին Լեհաստանում:

Միւս կողմից, ծնունդ առաւ մի ուրիշ շարժում տեղական հայ մտաւորականութեան մէջ, արդէն ազգային հողի վրայ, որը ձգտում էր պաշտպանել հայ-կաթոլիկ եկեղեցու առանձին գոյութիւնը: Սկսեցին լոյս տեսնել լեհահայոց պատմութեան մասին առանձին գրքուածքներ, որոնք յիշեցնում էին հայերին իրենց փառաւոր պատմական անցեալը Լեհաստան գալուց առաջ եւ Լեհաստանում:

Այս խնդրով զբաղուող եւ ամենավտանգաւոր վայրկեանին, հայերի ազգային ոգու արթնացման ամենից աւելի զարկ տուող գրողների մէջ առանձնապէս աչքի է ընկնում Զախարիասեւիչ եպիսկոպոսը եւ Սադոկ Բարոնչ (Պարոնեան) երէցը — երկուսն էլ հռոմէական կաթոլիկներ՝ անդամ կաթոլիկ միաբանութեան: Զախարիասեւիչը գրել է "Wiadobasc o Ormianach w Polsce" (1840 թ.), իսկ Բարոնչ՝ "Zywoty Slawnych Ormian w Polsce" (1856 թ.), եւ "Rys Dzejow Ormianskich" (1869 թ.):

Գրական աշխատանքին յաջորդեց եւ կրթական-մշակութային աշխատանքը: Դոկտ. Յովսէփ Թորոսովիչը 1865 թ. Փետրուար 9-ին հիմնեց «Հանրակրթական ճեմարան յանուն Յ. Թորոսովիչ» ի անունով՝ գիշերօթիկ մի դըպրոց հայ երիտասարդութեան դաստիարակութեան համար: Ուսանող կարող էին լինել միայն հայ-կաթոլիկ ծէսին պատկանող հայ պատանիները: Այս ճեմարանը գոյութիւն ունի այսօր էլ:

Սակայն, շարժումը յօդուտ հայ-կաթոլիկ եկեղեցու միութեան լատին եկեղեցու հետ կամ, աւելի ճիշտ, հայ-կաթոլիկների անջատ գոյութեան վերացման ձգտումը դեռ երկար մնաց կենդանի: Տակաւին անցեալ դարի վաթսունական թուականներին, ծագեց մի բանակոչ հայ ունեւոր կալուածատէր դասակարգի ներկայացուցիչների եւ երէց, յետագային Լվովի արքեպիսկոպոս Իսակովիչի միջեւ, որի ժամանակ կալուածատէրերը պնդում էին, որ առանձին ծէսի պահպանումը հայերի համար այլեւս ժամանակավրէպ է, որովհետեւ ո՛չ առանձին լեզու գոյութիւն ունի, ոչ սովորութիւններ, ոչ էլ առանձին հայկական ազգային ոգի, որով հայերը տարբերուէին լեհ ազգաբնակչութիւն կայ:

Իսակովիչի առարկութիւնները յանգում էին այն բանին, որ հայ ազգաբնակութիւնը զանգուածօրէն պահել ու պահում է դեռ հայ ազգային շահերը՝ մնալով միաժամանակ եւ լաւ լեհ քաղաքացի, եւ որ իրենց հայկական ծագումը իրենց համար անտանելի են համարում մի քանի տասնեակ հարուստ կալուածա-